# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք ք. Բյուրեղավան
Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

N Ե - 166/22
11 փետրվարի 2022թ.

ՀՀ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶՊԵՏ
ՊԱՐՈՆ Ա. ՍԱՀԱԿՅԱՆԻՆ

Հարգելի պարոն Սահակյան

«Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 33-րդ հոդվածի 4-րդ մասի 9-րդ կետի համաձայն՝ առաքվում են Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2022 թվականի NN 37-48-Ա որոշումները:

Առդիր՝ 7 (յոթ ) էլեկտրոնային ֆայլ:

11.02.2022

X

ՀԱՐԳԱՆՔՈՎ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

Կատ.՝ Լ. Ավուշյան
հեռ. (0222) 65203

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ու Մ

07 փետրվարի 2022թ. N 37-Ա

### ԻՆՔՆԱԿԱՄ ԿԱՌՈՒՑՎԱԾ ԱՅԳԵՏՆԱԿԸ, ՋՐԱՎԱԶԱՆԸ, ԱՍՏԻՃԱՆՆ ՈՒ ՀԵՆԱՊԱՏԸ ՕՐԻՆԱԿԱՆ ՃԱՆԱՉԵԼՈՒ, ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Քաղաքացիական օրենսգրքի 188-րդ հոդվածի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2006 թվականի մայիսի 18-ի N 912-Ն որոշմամբ հաստատված կարգի 8-13-րդ և 22.1-րդ կետերի, 2005 թվականի դեկտեմբերի 29-ի N 2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի, հիմք ընդունելով «Հարշին նախագիծ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության 2022 թվականի հունվարի 26-ի եզրակացությունն այն մասին, որ ինքնակամ շինության պահպանումը չի խախտում այլ անձանց իրավունքները և օրենքով պահպանվող շահերը, վտանգ չի սպառնում քաղաքացիների կյանքին ու առողջությանը, հաշվի առնելով, որ ինքնակամ կառուցված այգետնակը, ջրավազանը, աստիճանն ու հենապատը կառուցված են մինչև 2001 թվականի մայիսի 15-ը և կառուցված չեն ու չեն գտնվում Հողային օրենսգրքի 60-րդ հոդվածով սահմանված հողամասերի վրա, ինչպես նաև ինժեներատրանսպորտային օբյեկտների օտարման կամ անվտանգության գոտիներում, կառուցված չեն քաղաքաշինական նորմերի և կանոնների էական խախտումներով և չեն առաջացնում հարկադիր սերվիտուտ պահանջելու իրավունք և հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2021 թվականի օգոստոսի 06-ին տրված Աք-1634 արխիվային տեղեկանքն ու Արաքսի Արմենակի Դավթյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Աբովյանի շրջանի Նուռնուսի այգետարածքի 14-րդ թաղամասի թիվ 415 հասցեում գտնվող 07-051-0124-0092 ծածկագրով անշարժ գույքը վերահասցեավորել.

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամասի 1-ին փողոց 415:

2.Արաքսի Արմենակի Դավթյանին (ծնված՝ 1956 թվականին) սեփականության իրավունքով պատկանող Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Կոտայք թաղամասի 1-ին փողոց 415 հասցեի 0.0500 հեկտար մակերեսով բնակավայրերի նպատակային նշանակության բնակելի կառուցապատման հողամասում ինքնակամ կառուցված բնակելի նպատակային նշանակության ընդհանուր 56.0 քմ արտաքին (41.00 ներքին) մակերեսով այգետնակը, 28.7 քմ արտաքին (24.40 ներքին) մակերեսով ջրավազանը, 4 քմ մակերեսով աստիճանն ու 0.60 քմ մակերեսով հենապատը ճանաչել օրինական:

3.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «ԳԻՍ-ԱՐՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության կողմից տրված վերոնշյալ հողամասի ու շինությունների հատակագիծը:

4.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ պետական գրանցում կատարելու համար:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. փետրվարի 07
գ. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

07 փետրվարի 2022թ. N 38-Ա

## ԱՎԵՏԻՔ ԱՍՈՅԱՆ ԱՆՀԱՏ ՁԵՌՆԱՐԿԱՏԻՐՈՋԸ ՈԳԵԼԻՑ ԽՄԻՉՔՆԵՐԻ ԵՎ ԾԽԱԽՈՏԱՅԻՆ ԱՐՏԱԴՐԱՏԵՍԱԿՆԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ԹՈՒՅԼՏՎՈՒԹՅՈՒՆ ՏԱԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 45-րդ հոդվածի 1-ին մասի 2-րդ կետի, հիմք ընդունելով Ավետիք Ասոյանի հայտը և վճարման անդորրագրերը՝ **որոշում եմ**.

1.Ավետիք Ասոյան անհատ ձեռնարկատիրոջը (հարկ վճարողի հաշվառման համար՝ 43039059) տալ ոգելից խմիչքների և ծխախոտային արտադրատեսակների վաճառքի թույլտվություն Բյուրեղավան համայնքի քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց 26 շենքի դիմաց հասցեում գտնվող 98 քմ մակերեսով տարածքով առևտրի օբյեկտում 2022 թվականի հունվարի 1-ից մինչև հունիսի 30-ի համար:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. փետրվարի 07
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

07 փետրվարի 2022թ. N 39-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑ 50 ՇԵՆՔԻ 44 ԵՎ 52 ԲՆԱԿԱՐԱՆՆԵՐԸ ԲԱԽՇԻ ԳԵՎՈՐԳՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆՀԱՏՈՒՅՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2016 թվականի հունվարի 15-ի N 13-Ա և 2016 թվականի փետրվարի 19-ի N 20-Ա և 2021 թվականի դեկտեմբերի 13-ի N 74-Ա որոշումները, համայնքային սեփականություն համարվող բնակելի ֆոնդի և ոչ բնակելի տարածքների պահպանման, սեփականաշնորհման, բնակկարիքավոր ընտանիքների հաշվառման և բնակարանային հարցերով զբաղվող հանձնաժողովի առաջարկությունը և Մարիամ Սենիկի Անտոնյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 16,07 քմ ընդհանուր մակերեսով 44 և 22.11 քմ մակերեսով 52 բնակարանները (նախկին Օղակաձև փողոց 4-րդ հանրակացարան 58/58ա սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Բախշի Սերոբի Գևորգյանի երեք անձից բաղկացած ընտանիքին.
ընդհանուր բաժնային սեփականատերեր համարել՝
Բախշի Սերոբի Գևորգյանին՝ ծնված 1965 թվականի դեկտեմբերի 21-ին,
Մարիամ Սենիկի Անտոնյանին՝ ծնված 1965 թվականի հունիսի 02-ին,
Ռոզա Բախշիի Գևորգյանին՝ ծնված 1990 թվականի սեպտեմբերի 24-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Բախշի Սերոբի Գևորգյանի կողմից:

3.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Վոլոդյա Հայրապետյանին (նույնականացման քարտ՝ 006343479, տրված՝ 07 սեպտեմբերի 2017 թվականին 059-ի կողմից, ծնված՝ 1973 թվականի դեկտեմբերի 11-ին)՝ կատարել Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոց 50 շենքի 44 և 52 բնակարանները Բախշի Սերոբի Գևորգյանի ընտանիքին անհատույց օտարելու (նվիրելու) հետ կապված գործարքներ և կնքել նվիրատվության պայմանագիր:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. փետրվարի 07
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

08 փետրվարի 2022թ. N 40-Ա

### ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐԻ 2018 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆՎԱՐԻ 12-Ի N 04-Ա ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2018 թվականի հունվարի 12-ի «Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության պաշտոնների անձնագրերը հաստատելու մասին» N 04-Ա որոշման մեջ կատարել հետևյալ փոփոխությունները՝

1)որոշման N 13 հավելվածի 11-րդ կետում «Բյուրեղավան համայնքի Ջրաբեր բնակավայր» բառերը բոլոր հոլովաձևերով փոխարինել «համայնք» բառով՝ համապատասխան հոլովաձևերով.

2)որոշման N 14 հավելվածի 11-րդ կետում «Բյուրեղավան համայնքի Նուռնուս բնակավայր» բառերը բոլոր հոլովաձևերով փոխարինել «համայնք» բառով՝ համապատասխան հոլովաձևերով:

2.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. փետրվարի 08
ք. Բյուրեղավան

**ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ**
**ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ**

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 փետրվարի 2022թ. N 41-Ա

## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ԱՇԽԱՏԱԿԱԶՄԻ ՀԱՄԱՅՆՔԱՅԻՆ ԾԱՌԱՅՈՒԹՅԱՆ ԹԱՓՈՒՐ ՊԱՇՏՈՆՆԵՐԸ ԶԲԱՂԵՑՆԵԼՈՒ ՀԱՄԱՐ ՄՐՑՈՒՅԹՆԵՐ ԱՆՑԿԱՑՆԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Համայնքային ծառայության մասին» օրենքի 14-րդ հոդվածի, Հայաստանի Հանրապետության տարածքային կառավարման նախարարի 2006 թվականի օգոստոսի 29-ի N 13-Ն հրամանով հաստատված կարգի և հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ղեկավարի 2017 թվականի դեկտեմբերի 28-ի N 25-Ա որոշմամբ հաստատված N1 հավելվածի 8-րդ կետը՝ ***որոշում եմ.***

1.2022 թվականի մարտի 15-ին ժամը 10:00-ին անցկացնել մրցույթներ Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար՝

ա) Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 2.3-4).

բ)Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետ (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 3.2-1):

գ)Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի երկրորդ կարգի մասնագետ (պաշտոնի անձնագրի ծածկագիր՝ 3.3-1):

2.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության թափուր պաշտոններ զբաղեցնելու համար հայտարարությունների տեքստերը՝ համաձայն հավելվածի:

3.Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմին՝ սահմանված կարգով իրականացնել մրցույթների նախապատրաստական աշխատանքները:

4.Մրցութային հանձնաժողովի նիստերի տեխնիկական սպասարկումն իրականացնող լիազորված անձ նշանակել համայնքապետարանի աշխատակազմի քարտուղար Լիլիթ Ավուշյանին:

5. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. փետրվարի 09
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

09 փետրվարի 2022թ. N 42-Ա

### ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ ՊԼԱՆԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Արտակարգ իրավիճակներում բնակչության պաշտպանության մասին» օրենքի 16-րդ հոդվածի և հիմք ընդունելով Կոտայքի մարզպետի 2021 թվականի մարտի 31-ի N 92-Ա որոշումը՝ ***որոշում եմ.***

1.Հաստատել Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի տարածքում հնարավոր ջրհեղեղների, հեղեղումների, սելավների, քարաթափումների և սողանքների կանխարգելման, հետևանքների նվազեցման ու վերացման միջոցառումների պլանը՝ համաձայն N 1 հավելվածի:

2.Մինչև 2022 թվականի փետրվարի 11-ը ներառյալ Հայաստանի Հանրապետության արտակարգ իրավիճակների նախարարության փրկարարական ծառայության Կոտայքի մարզային փրկարարական վարչություն ներկայացնել.

1)համապատասխան միջոցառումների պլան,

2)տեղեկություններ համայնքի հակահեղեղային կառույցների հաշվառման վերաբերյալ՝ համաձայն N 2 հավելվածի,

3)առաջարկություններ՝ համայնքին սպառնացող պոտենցյալ վտանգավոր տեղամասերի և բնակչության անվտանգության ապահովման ուղղությամբ նախատեսվող միջոցառումների վերաբերյալ՝ համաձայն N 3 հավելվածի:

3.Սույն որոշման կատարման հսկողությունը դնել համայնքի ղեկավարի տեղակալ Միշա Եղիազարյանի վրա:

4. Սույն որոշումը ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. փետրվարի 09
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ ՈՒ Մ

10 փետրվարի 2022թ. N 43-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՔԱՂԱՔԱՊԵՏԱՐԱՆԻ 1997 ԹՎԱԿԱՆԻ ՕԳՈՍՏՈՍԻ 28-Ի ԹԻՎ 75 ՈՐՈՇՄԱՆ ՄԵՋ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 34-րդ հոդվածի և հիմք ընդունելով Ավետիս Հովհաննեսի Սոմունջյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Բյուրեղավանի քաղաքապետարանի 1997 թվականի օգոստոսի 28-ի թիվ 75 որոշման 4-րդ կետի «է» ենթակետում «Սոմունջյան» բառը փոխարինել «Սումունջյան» բառով:

2. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASANYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. փետրվարի 10
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ու Մ

10 փետրվարի 2022թ. N 44-Ա

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՔԱՂԱՔԻ ՕՂԱԿԱՁԵՎ ՓՈՂՈՑԻ 50 ՇԵՆՔԻ N 38 ԲՆԱԿԱՐԱՆԸ ՍՈՍԻԿ ՊՈՂՈՍՅԱՆԻ ԸՆՏԱՆԻՔԻՆ ԱՆՀԱՏՈՒՑ ՕՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 18-րդ հոդվածի 1-ին մասի 21-րդ կետի, Քաղաքացիական օրենսգրքի 594-596-րդ հոդվածների, հիմք ընդունելով Բյուրեղավան համայնքի ավագանու 2015 թվականի հոկտեմբերի 14-ի N 59-Ա որոշումը, բնակիանձնաժողովի առաջարկությունը և Սոսիկ Սերյոժայի Պողոսյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի սեփականություն համարվող Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 38,57 քմ ընդհանուր մակերեսով 38 բնակարանը (նախկին Օղակաձև փողոց 4-րդ հանրակացարան 45/46 սենյակներ) անհատույց օտարել (նվիրել) Սոսիկ Սերյոժայի Պողոսյանի հինգ անձից բաղկացած ընտանիքին.
ընդհանուր բաժնային սեփականատերեր համարել՝
Սոսիկ Սերյոժայի Պողոսյանին՝ ծնված 1950 թվականի հուլիսի 19-ին,
Լենա Հրաչիկի Դովլաթյանին՝ ծնված 1953 թվականի փետրվարի 02-ին,
Վահե Սոսիկի Պողոսյանին՝ ծնված 1977 թվականի դեկտեմբերի 17-ին,
Սյուզաննա Վարդանի Ստեփանյանին՝ ծնված 1984 թվականի հունվարի 01-ին,
Թերեզա Վահեի Պողոսյանին՝ ծնված 2004 թվականի դեկտեմբերի 19-ին:

2.Սահմանել, որ սույն որոշումից ծագող գույքային իրավունքների նոտարական ձևակերպման և պետական գրանցման հետ կապված վճարների ու տուրքերի վճարումը կատարվում է Սոսիկ Սերյոժայի Պողոսյանի կողմից:

3.Հանձնարարել Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի գլխավոր մասնագետ Վոլոդյա Հայրապետյանին (նույնականացման

քարտ՝ 006343479, տրված՝ 07 սեպտեմբերի 2017 թվականին 059-ի կողմից, ծնված՝ 1973 թվականի դեկտեմբերի 11-ին)՝ կատարել Բյուրեղավան քաղաքի Օղակաձև փողոցի 50 շենքի 38 բնակարանը Սոսիկ Սերյոժայի Պողոսյանի ընտանիքին անհատույց օտարելու (նվիրելու) հետ կապված գործարքներ և կնքել նվիրատվության պայմանագիր:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. փետրվարի 10
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 փետրվարի 2022թ. N 45-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 13-ի N 63-Ն որոշմամբ հաստատված հավելված N 2-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 10-ի N 06/22 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1.2022 թվականի համար «Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նկատմամբ կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.«Բյուրեղավանի Շառլ Ազնավուրի անվան արվեստի դպրոց» արտադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1) ապահովել կիրառված արտոնության կատարումը.

2)արտոնությունից օգտվողների կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALASYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. փետրվարի 11
ք. Բյուրեղավան

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
## ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 փետրվարի 2022թ. N 46-Ա

## ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔՈՒՄ ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆ ԿԻՐԱՌԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Բյուրեղավան համայնքի ավագանու 2021 թվականի դեկտեմբերի 13-ի N 63-Ն որոշմամբ հաստատված հավելված N1-ի և հիմք ընդունելով տեղական վճարների դրույքաչափի նվազեցման արտոնություն կիրառելու գործընթացն ապահովող մշտական հանձնաժողովի 2022 թվականի փետրվարի 10-ի N 06/22 արձանագրությունը՝ ***որոշում եմ.***

1.2022 թվականի համար Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպությունում մատուցված ծառայությունների դիմաց փոխհատուցման գումարի նկատմամբ կիրառել 50%-ի չափով նվազեցման արտոնություն՝ համաձայն հավելվածի:

2.Բյուրեղավանի «Արև» մանկապարտեզ նախադպրոցական ուսումնական հաստատություն համայնքային ոչ առևտրային կազմակերպության տնօրենին՝

1)ապահովել կիրառված արտոնության կատարումը.

2)արտոնությունից օգտվողների կարգավիճակի փոփոխման դեպքում եռօրյա ժամկետում տեղեկատվություն ներկայացնել համայնքապետարան:

3.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Nonrepudiable Signature

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALAYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՅԱՆ

2022թ. փետրվարի 11
ք. Բյուրեղավան

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

# Ո Ր Ո Շ Ո Ւ Մ

11 փետրվարի 2022թ. N 47-Ա

## ՄԻԱՎՈՐՎԱԾ ՄԵԿ ՀԱՍՑԵ ՏՐԱՄԱԴՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 29-րդ, 32-րդ, 50-րդ ու 51-րդ կետերի և հիմք ընդունելով Մարինե Ասատրյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Մարինե Ռաֆայելի Ասատրյանին սեփականության իրավունքով պատկանող Կոտայքի մարզ, համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գլխավոր փողոց 6-րդ փակուղի թիվ 1 բնակելի տան (վկայական N 22022021-07-0064, ծածկագիր՝ 07-051-0004-0062, տրված 2021 թվականի փետրվարի 22-ին) և 3/1 անշարժ գույքի (վկայական N 04022022-07-0068, ծածկագիր՝ 07-051-0004-0108, տրված 2022 թվականի փետրվարի 4-ին) հասցեները համարել չեղյալ և տրամադրել միավորված մեկ հասցե՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Գլխավոր փողոց 6-րդ փակուղի 1:

2.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ հասցեի գրանցում կատարելու համար:

3. Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

2022թ. փետրվարի 11
ք. Բյուրեղավան

# ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնք
ք. Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռ. (0222) 65203,
էլ. փոստ byureghavan.kotayq@mta.gov.am

## Ո Ր Ո Շ ՈՒ Մ

11 փետրվարի 2022թ. N 48-Ա

### ԱՆՇԱՐԺ ԳՈՒՅՔԸ ՎԵՐԱՀԱՍՑԵԱՎՈՐԵԼՈՒ ԵՎ ՀԱՏԱԿԱԳԻԾԸ ՀԱՍՏԱՏԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Համաձայն Հողային օրենսգրքի 59-րդ հոդվածի 2-րդ մասի, «Տեղական ինքնակառավարման մասին» օրենքի 35-րդ հոդվածի 1-ին մասի 22-րդ կետի, Հայաստանի Հանրապետության կառավարության 2005 թվականի դեկտեմբերի 29-ի №2387-Ն որոշմամբ հաստատված կարգի 62-րդ և 64-րդ կետերի ու հիմք ընդունելով «ՀԱՅԱՍՏԱՆԻ ԱԶԳԱՅԻՆ ԱՐԽԻՎ» պետական ոչ առևտրային կազմակերպության կողմից 2021 թվականի դեկտեմբերի 15-ին տրված Աը-2640 արխիվային տեղեկանքը, «Իրավունք սահմանող փաստաթղթի պատկանելիության իրավաբանական նշանակություն ունեցող փաստը հաստատելու մասին» նոտարական թիվ 02 ակտն ու Ժենիկ Վոլոդյայի Ազարյանի դիմումը՝ ***որոշում եմ.***

1.Աբովյանի շրջանի Նուռնուս այգետարածքի թիվ 14 տեղամասի թիվ 7 հողակտորի (ծածկագիր՝ 07-051-0143-0058) հասցեն համարել չեղյալ և վերահասցեավորել՝

Հայաստանի Հանրապետություն Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան գյուղ Նուռնուս Տնաշինական թաղամաս 13-րդ փողոց 3:

2.Հաստատել սույն որոշման անբաժանելի մասը կազմող «Սուրեն Շախյան» անհատ ձեռնարկատիրոջ կողմից տրված հատակագիծը:

3.Դիմել Կադաստրի կոմիտեի սպասարկման գրասենյակ՝ վերահասցեավորման գրանցում կատարելու համար:

4.Սույն որոշումն ուժի մեջ է մտնում ստորագրման օրվանից:

Recoverable Signature

X

Signed by: BALAYAN HAKOB 3009590148

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Հ. ԲԱԼԱՅԱՆ

2022թ. փետրվարի 11
ք. Բյուրեղավան

Հավելված
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2022 թվականի փետրվարի 09-ի N 41-Ա որոշման

# ՀԱՅՏԱՐԱՐՈՒԹՅՈՒՆ

Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի ղեկավարը հայտարարում է մրցույթ Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի համայնքային ծառայության հետևյալ թափուր պաշտոնները զբաղեցնելու համար.

**1. Թափուր պաշտոնի անվանումը՝**
**Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի գլխավոր մասնագետ (ծածկագիր՝ 2.3-4)**

**Աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.**
-կառավարության սահմանված կարգով կազմում է համայնքի գլխավոր հատակագիծը, հողերի գոտիավորման և օգտագործման սխեմաները, գոտիավորման այլ փաստաթղթեր.
-սահմանված կարգով վարում է համայնքի քաղաքաշինական կադաստրը, կազմում համայնքի քաղաքաշինական կանոնադրությունը.
-համայնքի բնակչությանը իրազեկում է միջավայրի ծրագրվող քաղաքաշինական փոփոխությունների մասին, նախապատրաստում կառուցապատողին տրվող ճարտարապետահատակագծային առաջադրանքների նախագծերը, ճարտարապետաշինարարական նախագծերի համաձայնեցման վերաբերյալ կատարում առաջարկություններ.
-նախապատրաստում է շինարարության (քանդման) թույլտվությունների, ավարտված շինարարության շահագործման փաստագրման և ըստ անհրաժեշտության մշակվող քաղաքաշինական փաստաթղթերի նախագծերը, օրենքով սահմանված կարգով իրականացնում միջոցառումներ շինարարության թույլտվությամբ նախատեսված ժամկետներում կառուցապատումն ավարտելու ուղղությամբ.
-իրականացնում է համայնքի սեփականություն համարվող հողերի, անտառային և ջրային տարածքների, ինչպես նաև շրջակա միջավայրի պահպանությունը.
-իրականացնում է այլ լիազորություններ:

**Աշխատակազմի գլխավոր մասնագետի պաշտոնի անձնագրով պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները.**
-բարձրագույն կրթություն, համայնքային ծառայության կամ պետական ծառայության պաշտոններում առնվազն երկու տարվա ստաժ կամ վերջին երեք տարվա ընթացքում քաղաքական կամ հայեցողական կամ քաղաքացիական պաշտոններում առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ կամ վերջին ութ տարվա ընթացքում համայնքի ավագանու անդամի աշխատանքային գործունեության առնվազն երկու տարվա փորձ կամ առնվազն երեք տարվա մասնագիտական աշխատանքային ստաժ, մինչև 2018 թվականի հունվարի 1-ը համայնքային ծառայության առաջատար պաշտոնների անձնագրերը՝ համայնքային ծառայության, պետական և (կամ) համայնքային կառավարման ոլորտի առնվազն մեկ տարվա աշխատանքային ստաժ.
-Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Քաղաքաշինության մասին», «Հուղարկավորությունների կազմակերպման և գերեզմանատների ու դիակիզարանների շահագործման մասին» օրենքների, Հողային օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
-անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
-համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն.
-առնվազն մեկ օտար լեզվի տիրապետում:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝** ***2022 թվականի փետրվարի 28:***

**Մրցույթն սկսելու օրը, ժամը և վայրը՝** Մրցույթը կկայանա ***2022 թվականի մարտի 15-ին, ժամը 10:00-ին***, Բյուրեղավանի Մշակույթի տան շենքում (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց) :

**2. Թափուր պաշտոնի անվանումը՝**
**Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի առաջին կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.2-1)**

**Բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.**
-մասնակցում է համայնքի բյուջեի նախագծի և տարեկան հաշվետվությունների կազմման աշխատանքներին.
- մասնակցում է համայնքի իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքային հարկերի հաշվառման աշխատանքներին.
- իրականացնում է համայնքում ծանուցագրերի տրամադրման, տեղական հարկերի գանձման աշխատանքները, կազմում ամփոփները և սահմանված կարգով հանձնում համակարգողին.
- աջակցում է համայնքի տեղական տուրքերի և վճարների գանձման աշխատանքներին.
- իրականացնում է այլ լիազորություններ:

**Բաժնի առաջին կարգի մասնագետի պաշտոնի անձնագրով պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները.**
-առնվազն միջնակարգ կրթություն.
-Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Հայաստանի Հանրապետության բյուջետային համակարգի մասին», «Տեղական տուրքերի և վճարների մասին» օրենքների, Հարկային օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում.
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝** ***2022 թվականի փետրվարի 28:***

**Մրցույթն սկսելու օրը, ժամը և վայրը՝** Մրցույթը կկայանա ***2022 թվականի մարտի 15-ին, ժամը 10:00-ին***, Բյուրեղավանի Մշակույթի տան շենքում (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց) :

**3. Թափուր պաշտոնի անվանումը՝**
**Հայաստանի Հանրապետության Կոտայքի մարզի Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմի ֆինանսատնտեսագիտական, եկամուտների հաշվառման և հավաքագրման, ծրագրերի կազմման և համակարգման բաժնի երկրորդ կարգի մասնագետ (ծածկագիր՝ 3.3-1)**

**Բաժնի երկրորդ կարգի մասնագետի պաշտոնի անձնագրով սահմանված հիմնական գործառույթների համառոտ նկարագիրը.**
- աջակցում է գույքային հարկերի բազաների վարման աշխատանքներին.
-մասնակցում է իրավաբանական և ֆիզիկական անձանց գույքային հարկերի հաշվառման աշխատանքներին.
-իրականացնում է համայնքում ծանուցագրերի տրամադրման, տեղական հարկերի գանձման աշխատանքները, կազմում ամփոփները և սահմանված կարգով հանձնում համակարգողին.
-մասնակցում է համայնքի վարչական սահմաններում գտնվող համայնքային և պետական սեփականություն համարվո՞ղ վարձակալությամբ տրամադրված հողերի, համայնքի սեփականություն համարվող վարձակալությամբ տրամադրված գույքի հաշվառմանը, ապահովում է վարձակալական վճարների գանձումը.
-իրականացնում է այլ լիազորություններ:

**Բաժնի երկրորդ կարգի մասնագետի պաշտոնի անձնագրով պաշտոնը զբաղեցնելու համար մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջները.**
- առնվազն միջնակարգ կրթություն.
-Հայաստանի Հանրապետության Սահմանադրության, «Համայնքային ծառայության մասին», «Հանրային ծառայության մասին», «Տեղական ինքնակառավարման մասին», «Տեղական տուրքերի և վճարների

մասին» օրենքների, Հարկային օրենսգրքի, աշխատակազմի կանոնադրության և իր լիազորությունների հետ կապված այլ իրավական ակտերի անհրաժեշտ իմացություն, ինչպես նաև տրամաբանելու, տարբեր իրավիճակներում կողմնորոշվելու ունակություն.
- անհրաժեշտ տեղեկատվության տիրապետում,
- համակարգչով և ժամանակակից այլ տեխնիկական միջոցներով աշխատելու ունակություն:

**Փաստաթղթերի ներկայացման վերջնաժամկետը՝** ***2022 թվականի փետրվարի 28:***

**Մրցույթն սկսելու օրը, ժամը և վայրը՝** Մրցույթը կկայանա ***2022 թվականի մարտի 15-ին***, ***ժամը 10:00-ին***, Բյուրեղավանի Մշակույթի տան շենքում (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Զորավար Անդրանիկի փողոց) :

**Նշված թափուր պաշտոնների համար փաստաթղթերի ներկայացման վայրը՝** Բյուրեղավանի համայնքապետարանի աշխատակազմ (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ համայնք Բյուրեղավան, քաղաք Բյուրեղավան Վազգեն Ա Վեհափառի փողոց թիվ 1 վարչական շենք, հեռախոս՝ 0222 63236) կամ Կոտայքի մարզպետարանի աշխատակազի ՏԻ և ՀԳՄՀ վարչության ՏԻ և ՀԾՀ բաժին, (հասցե՝ ՀՀ Կոտայքի մարզ, քաղաք Հրազդան, Կենտրոն վարչական շենք, հեռախոս՝ 0223 23413), ժամը 10:00-ից 18:00, բացի շաբաթ և կիրակի օրերից:

**Դիմող ՀՀ քաղաքացիները և ՀՀ-ում փախստականի կարգավիճակ ունեցող անձինք մրցույթին մասնակցելու համար պետք է ներկայացնեն հետևյալ փաստաթղթերը՝**
-գրավոր դիմում (տրվում է հանձնաժողովի անունով)՝ լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս.
-տվյալ պաշտոնն զբաղեցնելու համար քաղաքացու մասնագիտական գիտելիքների և աշխատանքային ունակությունների տիրապետմանը ներկայացվող պահանջների բավարարումը հավաստող փաստաթղթերի պատճենները.
- հայտարարությունների ձևեր՝ լրացվում է փաստաթղթերը ներկայացնելիս.
-արական սեռի անձինք ներկայացնում են նաև զինգրքույկի կամ դրան փոխարինող ժամանակավոր և զորակոչային տեղամասին կցագրման վկայականի պատճենները կամ համապատասխան տեղեկանք.
-մեկ լուսանկար՝ 3 X 4 սմ չափսի.
- անձնագրի (անձը հաստատող փաստաթղթի) պատճենը:

Փաստաթղթերը ներկայացվում են անձամբ:
Ներկայացված փաստաթղթերի պատճենները ետ չեն վերադարձվում:

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

**Հավելված N 1**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2022 թվականի փետրվարի 09-ի N 42-Ա որոշման

# ՊԼԱՆ
# ԿՈՏԱՅՔԻ ՄԱՐԶԻ ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆ ՀԱՄԱՅՆՔԻ ՏԱՐԱԾՔՈՒՄ 2022 ԹՎԱԿԱՆԻ ԸՆԹԱՑՔՈՒՄ ՀՆԱՐԱՎՈՐ ՋՐՀԵՂԵՂՆԵՐԻ, ՀԵՂԵՂՈՒՄՆԵՐԻ, ՍԵԼԱՎՆԵՐԻ, ՔԱՐԱԹԱՓՈՒՄՆԵՐԻ ԵՎ ՍՈՂԱՆՔՆԵՐԻ ԿԱՆԽԱՐԳԵԼՄԱՆ, ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ՈՒ ՎԵՐԱՑՄԱՆ ՄԻՋՈՑԱՌՈՒՄՆԵՐԻ

| Հ/Հ | Միջոցառումների անվանումը | Կատարող | Կատարման ժամկետ |
|---|---|---|---|
| 1 | 2 | 3 | 4 |
| **1. Կանխարգելիչ միջոցառումներ** | | | |
| 1. | Ուսումնասիրել և գնահատել համայնքի տարածքում գտնվող գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների վիճակը և արդյունքների մասին տեղեկատվություն ներկայացնել Կոտայքի մարզային փրկարարական վարչություն: | Համայնքի ղեկավարի տեղակալ | Մինչև 2022 թվականի ապրիլի 15 |
| 2. | Նախապատրաստել համապատասխան տեխնիկա և շինարարական նյութեր՝ գետերի հուների, հակահեղեղային կառույցների և սելավատարների անհրաժեշտ հատվածները մաքրելու, վտանգավոր տեղամասերում ափապաշտպան կառույցները ամրացնելու համար: | Համայնքի ղեկավարի տեղակալ | Մինչև 2022 թվականի ապրիլի 15 |
| 3. | Մաքրել համայնքի տարածքով հոսող գետերի հուները, հակահեղեղային կառույցները և սելավատարները: Վտանգավոր տեղամասերում ամրացնել ափապաշտպան կառույցները: | Համայնքի ղեկավարի տեղակալ | Մինչև 2022 թվականի ապրիլի 15 |
| 4. | Բնակչության հետ կատարել բացատրական աշխատանքներ՝ ջրածածկման, հեղեղավտանգ, սելավավտանգ և սողանքավտանգ գոտիներում դաշտային աշխատանքները կարգավորելու համար: | Համայնքի ղեկավարի տեղակալ | Մշտական. |
| 5. | Պատրաստ վիճակի բերել համայնքային կազմավորումները և արագ արձագանքման փրկարար խմբերը, դրանք հագեցնել համապատասխան անձնակազմով, տեխնիկայով և սարքավորումներով | Կազմավորումների, փրկարարական ջոկատի հրամանատարներ, համայնքի ղեկավարի տեղակալ | Մինչև 2022 թվականի ապրիլի 15 |
| **2. Հիմնական միջոցառումներ** | | | |
| 6. | Իրազեկել վտանգավոր տարածքներում գտնվող բնակչությանը՝ իրենց սպառնացող վտանգների, նկուղային հարկերից իրենց ունեցվածքի տեղափոխման անհրաժեշտության, ինչպես նաև նման դեպքերում բնակչության վարվելակերպի կանոնների մասին: | Համայնքի ղեկավարի տեղակալ | Մշտական |
| 7. | Հնարավոր վտանգավոր վայրերում կազմակերպել հսկողություն՝ արագ արձագանքելու և համապատասխան միջոցներ ձեռնարկելու համար: | Համայնքի ղեկավարի տեղակալ | Անհրաժեշտության դեպքում |
| 8. | Անհրաժեշտության դեպքում կազմակերպել և իրականացնել վտանգավոր տարածքներից անվտանգ տարածք՝ մարդկանց, | Տարահանման հանձնաժողովի | Անհրաժեշտության դեպքում |

| | | | |
|---|---|---|---|
| | կենդանիների և նյութական արժեքների ժամանակավոր տեղափոխումը և տեղաբաշխումը: | նախագահի, համայնքի ղեկավար տողակալ | |
| 9. | Տուժած շրջաններում կազմակերպել և իրականացնել փրկարարական և այլ անհետաձգելի վթարավերականգնողական աշխատանքներ: | Կոտայքի մարզային փրկարարական վարչության պետ, համայնքի ղեկավար | Ըստ անհրաժեշտության |
| 10. | Ներգրավել աշխատունակ քաղաքացիներին (իրենց համաձայնությամբ) ջրհեղեղների, սելավների և սողանքների պատճառած հետևանքների վերացման գործընթացին՝ ըստ մասնագիտական և անձնական հնարավորությունների: | Համայնքի ղեկավարի տեղակալ | Անհրաժեշտության դեպքում |
| 11. | Ապահովել կապը աղետի շրջանում գտնվող համայնքների, կազմակերպությունների, հիմնարկ-ձեռնարկությունների և մարզի արտակարգ իրավիճակների մշտական գործող հանձնաժողովի միջև: | «ՎԵՈՆ Արմենիա» ՓԲԸ-ի Կոտայքի տարածքային կենտրոն | |
| 12. | Գիշերային ժամերին փրկարարական և վթարավերականգնողական աշխատանքները շարունակելու համար ապահովել համապատասխան լուսավորվածություն: | «Հայաստանի էլեկտրական ցանցեր» ՓԲԸ-ի Գեղամա» մասնաճյուղի տնօրեն | |

**Հավելված N 2**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2022 թվականի փետրվարի 09-ի  N 42-Ա  որոշման

# ՏԵՂԵԿԱՏՎՈՒԹՅՈՒՆ

## Կոտայքի մարզի Բյուրեղավան համայնքի  հակահեղեղային կառույցների հաշվառման

| Հ/հ | Կառույցի տեղադրությունը (բնակավայր, գետավազան, վտակ ) | Կառույցի տիպը (հեղեղատար, Հեղեղա-կարգավորիչ, բառաժ ) | Կառույցի | | | | Կառույցի տեղանքի սեյսմիկության աստիճանը (բալ ) | Մոտակա բանակավայրի և կառուցվածքների անվանումը, որոնք կարող են տուժել Կառույցի անբավարար աշխատանքի հետևանքով | Կառույցի տեխնիկական վիճակը (բավարար, անբավարար ) |
|---|---|---|---|---|---|---|---|---|---|
| | | | երկարություն (մ ) | լայնություն (մ ) | խորություն (մ ) | Կող-եզրերի թեքություն (մ ) | | | |
| 1 | 2 | 3 | 4 | 5 | 6 | 7 | 8 | 9 | 10 |
| 1 | Բյուրեղավան բնակավայր | սելավատար | 52 | 1 | 0,35 | - | - | բնակելի շենքեր՝ թվով 2 հատ և մեխանիկական արտադրամաս | բավարար |
| 2 | Նուռնուս բնակավայր | կամուրջ | 50 | 6 | 5 | 0 | 8 | - | բավարար |
| 3 | Նուռնուս բնակավայր | հեղեղատար | 15 | 6 | 3 | 0 | 8 | - | բավարար |
| 4 | Ջրաբեր բնակավայր | - | - | - | - | - | - | - | - |

**Հավելված**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2022 թվականի փետրվարի 11- ի N 45-Ա որոշման

**ՑԱՆԿ**
**ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ**
**ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ**

**«ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ ՇԱՌԼ ԱԶՆԱՎՈՒՐԻ ԱՆՎԱՆ ԱՐՎԵՍՏԻ ԴՊՐՈՑ» ԱՈՒՀ ՀՈԱԿ**

| Հ/Հ | ԵՐԵԽԱՅԻ ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ԾՆՆԴՅԱՆ ՕՐ, ԱՄԻՍ, ՏԱՐԵԹԻՎ | ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԸ |
|---|---|---|---|
| 1. | Մարիամ Գառնիկի Հունանյան | 16.07.2007թ. | 50%<br>2022թ.-ի փետրվարի 01-ից սկսած |
| 2. | Մարինա Նիկոլայի Տոնյան | 21.06.2010թ. | 50%<br>2022թ.-ի փետրվարի 01-ից սկսած |

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ

**Հավելված**
Բյուրեղավան համայնքի ղեկավարի
2022 թվականի փետրվարի 11-ի N 46-Ա որոշման

## ՑԱՆԿ
## ՏԵՂԱԿԱՆ ՎՃԱՐՆԵՐԻ ԴՐՈՒՅՔԱՉԱՓԻ ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅՈՒՆԻՑ ՕԳՏՎՈՂՆԵՐԻ

## ԲՅՈՒՐԵՂԱՎԱՆԻ «ԱՐԵՎ» ՄԱՆԿԱՊԱՐՏԵԶ ՆՈՒՀ ՀՈԱԿ

| Հ/Հ | ԵՐԵԽԱՅԻ ԱՆՈՒՆ, ՀԱՅՐԱՆՈՒՆ, ԱԶԳԱՆՈՒՆ | ԾՆՆԴՅԱՆ ՕՐ, ԱՄԻՍ, ՏԱՐԵԹԻՎ | ՆՎԱԶԵՑՄԱՆ ԱՐՏՈՆՈՒԹՅԱՆ ՏՈԿՈՍԸ |
|---|---|---|---|
| 1. | Էլեն Համլետի Բադիկյան | 12.12.2017թ. | 50%<br>2022թ.-ի փետրվարի 01-ից սկսած |
| 2. | Ալեն Համլետի Բադիկյան | 12.12.2017թ. | 50%<br>2022թ.-ի փետրվարի 01-ից սկսած |
| 3. | Սարգիս Ռուստամի Կոնջորյան | 08.08.2016թ. | 50%<br>2022թ.-ի փետրվարի 01-ից սկսած |

Recoverable Signature

X

ՀԱՄԱՅՆՔԻ ՂԵԿԱՎԱՐ՝ Signed by: BALASYAN HAKOB 3009590148 Հ. ԲԱԼԱՍՅԱՆ